



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ի Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

ԿՈԴ
050.0173Ա. 01.10.18

1 հոկտեմբերի 2018 թվականի թիվ 173 Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 31-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ**

Արթուր Զավադյան

2018 թ. հոկտեմբերի 1
Երևան

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2018 թ. սեպտեմբերի 28-ի թիվ 173 Ա որոշմամբ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը
«Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ¹**

**1. «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի կադրարման գործընթացը**

2018 թվականի առաջին ութ ամիսներին բարձր տնտեսական ակտիվությունը պահպանվել է, և սպասվում է, որ տարվա արդյունքում տնտեսական աճը կգերազանցի ՀՀ կառավարության կողմից կանխատեսված և 2018 թվականի ՀՀ պետական բյուջեի հիմքում դրված ցուցանիշը: Այսպես, հունվար-օգոստոս ժամանակահատվածում տնտեսական ակտիվության աճը կազմել է 7.7%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 5.5%-ի դիմաց:

Տնտեսական աճի ձևավորման մեջ կարևոր դեր են ունեցել առաջարկի գործոնները՝ պայմանավորված մասնավորապես ծառայությունների և շինարարության ճյուղերում գրանցված արտադրողականության աճով: Ընդ որում, համախառն պահանջարկի տեսանկյունից, տնտեսական ակտիվությունը բացառապես գրանցվել է մասնավոր ներքին պահանջարկի աճի հաշվին, պայմանավորված զսպող հարկաբյուջետային քաղաքականության պայմաններում իրականացված ընդլայնող դրամավարկային քաղաքականության ազդեցությամբ: Մասնավոր պահանջարկի աճը ձևավորվել է հատկապես մասնավոր ներդրումների բարձր աճի հաշվին, որի մեջ մեծ դեր է խաղացել արտադրական պաշարների փոփոխությունը:

Ներքին պահանջարկի աճն արտահայտվել է նաև ընթացիկ հաշվի զարգացումներում, որտեղ ապրանքների և ծառայությունների ներմուծման իրական աճը 2018 թվականի առաջին կիսամյակի արդյունքներով կազմել է 21.2 տոկոս՝ զգալիորեն գերազանցելով ապրանքների և ծառայությունների իրական արտահանման 9.7 տոկոս աճի ցուցանիշը: Եվ չնայած դրամական փոխանցումների և գործոնային եկամուտների ներհոսքը դոլարային արտահայտությամբ աճել է 9.9 տոկոսով, այդուհանդերձ, ՀՀ ընթացիկ հաշիվ/ՀՆԱ պակասուրդը 2018 թվականի առաջին կիսամյակում ունեցել է աճի միտում:

Հարկերի հավաքագրումը 2018 թվականին ընթացել է ՀՆԱ սպասվածից բարձր մակարդակի ձևավորման ուղեկցությամբ, որի պարագայում հարկեր/ՀՆԱ ցուցանիշը նախորդ տարվա նկատմամբ սպասվում է 0.5 տոկոսային կետով ցածր, իսկ առանց ԱԱՀ-ի վերադարձի և գերավճարի ցուցանիշի, հարկային եկամուտներն աճել են, և սպասվում է, որ տարվա արդյունքում (հաշվի չառած ԱԱՀ հետ վերադարձի և գերավճարների գումարը) հարկեր/ՀՆԱ ճշգրտված ցուցանիշի գծով աճը կկազմի 0.8 տոկոսային կետ: Նման

¹ Սույն փաստաթղթում ներկայացված թվային տվյալները բերված են «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծից:

զարգացումների պարագայում հարկային եկամուտները համախառն պահանջարկի վրա կունենան փոքր զսպող ազդեցություն:

Համախառն պահանջարկի վրա զգալի զսպող ազդեցություն է դրսևորվել պետական ծախսերի քաղաքականության ոլորտում: Այսպես, տարվա ընթացքում ՀՀ պետական բյուջեի ծախսերի կատարումն ընթացել է ՀՆԱ-ում ծախսերի որոշ հոդվածների գծով զգալի թերակատարման, իսկ որոշ հոդվածների գծով՝ տնտեսման ուղղությամբ: Ակնկալվում է, որ տարվա արդյունքում ծախսերը կկազմեն ՀՆԱ-ի 23.5%-ը՝ նախորդ տարվա 27.0%-ի դիմաց: Ընդ որում, ՀՆԱ-ի մեջ պետական բյուջեի ծախսերի նվազումը արձանագրվել է և՛ ընթացիկ, և՛ կապիտալ ծախսերի գծով:

Նշված զարգացումների ներքո գնահատվում է, որ 2018 թվականին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը էապես կնվազի՝ կազմելով ՀՆԱ-ի 1.7%-ը՝ 3.1 տոկոսային կետով ցածր գտնվելով 2017 թվականի պակասուրդի փաստացի մակարդակից: Արդյունքում, 2018 թվականին ՀՀ հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա կունենա զգալի զսպող ազդեցություն:

Հարկ է նշել, որ պակասուրդի կրճատումը, ուղեկցվելով ՀՆԱ կանխատեսվածից բարձր մակարդակով, հանգեցրել է ՀՆԱ-ում ՀՀ կառավարության պարտքի 3.2 տոկոսային կետ նվազման, որը, ըստ գնահատականների, տարվա արդյունքում կկազմի շուրջ 51%: Մինևույն ժամանակ, ընդլայնող դրամավարկային քաղաքականության շարունակական իրականացման արդյունքում նպաստավոր պայմաններ են ստեղծվել նաև պետական ներքին պարտքի սպասարկման ծախսերի՝ տոկոսադրույքների նվազման համար: Այսպես, տարվա առաջին ութ ամիսներին տեղաբաշխված արժեթղթերի միջին տոկոսադրույքը կազմել է 9.13%՝ անցած տարվա նույն ժամանակահատվածի 10.68%-ի դիմաց, ընդ որում նվազումն արձանագրվել է տեղաբաշխված բոլոր ժամկետայնության արժեթղթերի գծով:

Այսպիսով, 2018 թվականի վերը նշված զարգացումներն, ուղեկցվելով հարկաբյուջետային կոնսոլիդացման շարունակական իրականացմամբ, նպաստել են ՀՀ պետական պարտքի կայունացման և մակրոտնտեսական կայունության ապահովմանը, մինևույն ժամանակ զսպող ազդեցություն դրսևորել համախառն պահանջարկի ձևավորման վրա:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

ՀՀ տնտեսության շարունակական զարգացման և ներառական տնտեսական աճի ապահովման ՀՀ կառավարության որդեգրած գերակա նպատակի իրագործման սկզբունքների ներքո, ՀՀ կառավարությունը 2019 թվականի ՀՀ պետական բյուջեում նախատեսել է ՀՆԱ իրական աճի 4.9% մակարդակ՝ գործունեության հիմնական շեշտը դնելով ՀՀ տնտեսության ստվերային հատվածի կրճատման և տնտեսական աճի սոցիալական արդյունքների բարձրացման վրա:

Գնահատվում է, որ 2019 թվականին տնտեսական աճի ձևավորումը պայմանավորվելու է հիմնականում Կառավարության կողմից իրականացվող

կառուցվածքային բարեփոխումների ընթացքով, գործընկեր երկրներում ակնկալվող տնտեսական աճով, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամավարկային ընդլայնող քաղաքականության իրականացման արդյունքում 2016 թվականից շարունակվող տոկոսադրույքների նվազման ազդեցության փոխանցմամբ: Տնտեսության ճյուղային զարգացումներում կշարունակվի ծառայությունների ճյուղի կողմից ՀՆԱ աճին ամենաբարձր նպաստումը: Տնտեսության մնացած ճյուղերում 2019 թվականի տնտեսական աճը կպահպանվի, որը պայմանավորված կլինի արտադրողականության աճի միտումների շարունականությամբ:

Հատկանշական է, որ 2019 թվականի տնտեսական բարեփոխումների իրականացման ընթացքում ՀՀ կառավարությունը շարունակելու է ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականության իրականացումը՝ մասնավորապես, շարունակելով շեշտը դնել արտահանելի ճյուղերին ուղղված ներդրումների խթանման վրա: Ինչ վերաբերում է արտահանելի ճյուղերի զարգացմանը նպաստող ներդրումային քաղաքականությանը, ապա վերջինիս արդյունքում արտահանման աճի իրական ցուցանիշը կգերազանցի ներմուծման իրական աճի ցուցանիշին: Այդուհանդերձ, 2019 թվականին համախառն պահանջարկի հիմնական շարժիչ է հանդիսանալու ներքին պահանջարկը՝ սպառման 5 տոկոս և ներդրումների 6.1 տոկոս իրական աճի պարագայում:

Շարունակելով պարտքի կայունության պահպանմանն ուղղված քաղաքականությունը՝ 2019 թվականին ևս հարկաբյուջետային քաղաքականությունը կշարունակի կոնսոլիդացիան՝ միջնաժամկետ ծախսային ծրագրի ցուցանիշի համեմատ ավելի շատ կրճատելով ՀՆԱ-ում պակասուրդի մակարդակը: Այսպես, տարվա համար նախատեսվում է ՀՆԱ-ում բյուջեի պակասուրդի 2.2 տոկոս, որը 0.1 տոկոսային կետով ցածր է միջնաժամկետ ծրագրից և 0.5 տոկոսային կետով ավել է 2018 թվականի ընթացքում պակասուրդի զգալի կրճատված մակարդակից: Պակասուրդը թեև հանգեցնում է պետական պարտքի անվանական աճի, սակայն պակասուրդի նկատմամբ ՀՆԱ-ի առաջանցիկ աճի պայմաններում ՀՀ պետական պարտքը ՀՆԱ-ում պահպանվում է 2018 թվականին սպասվող մակարդակում:

2019 թվականի պետական բյուջեի եկամուտների մասով ակնկալվում է ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների տեսակարար կշռի 2018 թվականի համար սպասվող ցուցանիշի համեմատ 0.4 տոկոսային կետ աճ, որի պարագայում հարկեր/ՀՆԱ ցուցանիշը 2019 թվականին կկազմի 20.7 տոկոս: Ընդ որում, 2019 թվականի հարկեր/ՀՆԱ ցուցանիշը 0.3 տոկոսային կետով ցածր է միջնաժամկետ ծախսային ծրագրում տարվա համար կանխատեսված ցուցանիշից:

Ինչ վերաբերում է պետական բյուջեի ծախսերին, ապա 2019 թվականին իրականացվող քաղաքականության արդյունքում ձևավորվող ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը 0.3 տոկոսային կետով ցածր է միջնաժամկետում տարվա համար կանխատեսվածի համեմատ և 0.8 տոկոսային կետով բարձր է 2018 թվականի սպասվող ցուցանիշի համեմատ: 2019 թվականին նախատեսվում է կապիտալ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշի 3.2% մակարդակ, ինչը, որոշակիորեն գերազանցելով 2018 թվականի ցուցանիշը, կարևոր գործոն կհանդիսանա երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման համար: Հատկանշական է, որ պետական ծախսերի իրականացման հիմնական շեշտը դրվում է պետական ֆինանսական միջոցների արդյունավետ բաշխման և ծախսերի նպատակային ուղղվածության վրա՝ ապահովելով ծախսվող միջոցների դիմաց առավելագույն արդյունքի ստացումը:

Պետական պարտքի վերաբերյալ կարևորվում է պարտքի կառուցվածքի բարելավումը՝ մասնավորապես արտաքին պարտքը ներքին պարտքով փոխարինումը, ինչպես նաև կապիտալի շուկայի զարգացմանն ուղղված ներքին պարտքի կառավարման մեխանիզմների ներդրումը՝ մասնավորապես ներքին պարտքի գործիքակազմի ընդլայնումը և միջազգային ինստիտուցիոնալ մասնակիցների աճը:

Հարկ է նշել, որ 2018 թվականի ՀՀ պետական բյուջեի ծրագրում հաշվի են առնվել հնարավոր ռիսկերն ու անորոշությունները, գնահատվել են դրանց ի հայտ գալու պարագայում բյուջեի ծրագրի հիմքում ընկած հիմնական ենթադրություններից և ՀՆԱ կանխատեսումներից հնարավոր շեղումների ազդեցությունը բյուջեի հոսքերի վրա:

Այսպիսով, գնահատվում է, որ 2019 թվականի ՀՀ պետական բյուջեի ծրագրի իրականացումը համախառն պահանջարկի վրա կունենա չեզոք ազդեցություն, որի պարագայում 2019 թվականի տնտեսական աճին նպաստող հիմնական գործոնը լայնածավալ կառուցվածքային բարեփոխումներն են՝ ապահովելով ներդրումային միջավայրի բարելավման, երկրի մրցակցային դիրքի բարելավման շոշափելի արդյունքներ: Այդ ամենը, զուգակցվելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից գների կայունության և ֆինանսական կայունության ապահովման հետ, կնպաստի ընդհանուր մակրոտնտեսական կայունությանը, և, լրացվելով ՀՀ կառավարության կառուցվածքային բարեփոխումներով, ամուր հիմքեր կստեղծեն երկարաժամկետ ներառող տնտեսական աճի համար: